

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

## ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

## Ա ՄԱԿԱՐԴԱԿ

- 1) Մարաստանի, Բաբելոնի և Հայաստանի դաշնակից զորքերը Ե՞րբ արշավեցին դեպի Ասորեստանի վերջին հենակետ Կարքեմիշ.
- 1) Ք. ա. 612 թ.
  - 2) Ք. ա. 605 թ.
  - 3) Ք. ա. 621 թ.
  - 4) Ք. ա. 609 թ.
- 2) Ե՞րբ են հայերն ապստամբել և սպանել Ակակիոսին.
- 1) 548 թ.
  - 2) 532 թ.
  - 3) 536 թ.
  - 4) 539 թ.
- 3) Ե՞րբ են Ադրբեջանի ՕՍՕՆ-ը և խորհրդային բանակը բացահայտ պատերազմ սկսել Հյուսիսային Արցախի հայ բնակչության դեմ.
- 1) 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին
  - 2) 1992 թ. մարտ-ապրիլ ամիսներին
  - 3) 1991 թ. փետրվար-մարտ ամիսներին
  - 4) 1990 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին
- 4) Հայաստանում և Փոքր Ասիայում ո՞ր դարում են առաջին անգամ հայտնվել թուրքերը.
- 1) X դարի երկրորդ կեսին
  - 2) VIII դարում
  - 3) XI դարի երկրորդ կեսին
  - 4) IX դարում
- 5) Հովհաննես Թուրունջին հայկական պատվիրակության կազմում Փարիզ է ժամանել՝
- 1) 1683 թ.
  - 2) 1673 թ.
  - 3) 1663 թ.
  - 4) 1666 թ.
- 6) Ե՞րբ է գահակալել հայոց Խոսրով I թագավորը.
- 1) 198-215 թթ.
  - 2) 216-252 թթ.
  - 3) 185-198 թթ.
  - 4) 164-185 թթ.

- 7 Հայհեղկոմը ե՞րբ է հրապարակել «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանը.
- 1) 1920 թ. դեկտեմբերի 10-ին
  - 2) 1921 թ. հունիսի 24-ին
  - 3) 1920 թ. դեկտեմբերի 8-ին
  - 4) 1920 թ. դեկտեմբերի 13-ին
- 8 Ե՞րբ է Մովսես Սարաֆյանը Հայաստանի ազատագրության իր ծրագիրը ներկայացրել Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային.
- 1) 1771 թ.
  - 2) 1768 թ.
  - 3) 1766 թ.
  - 4) 1769 թ.
- 9 Ո՞վ է «Ծովակալ Իսակով» արձանի հեղինակը.
- 1) Նորայր Կարգանյանը
  - 2) Յուրի Պետրոսյանը
  - 3) Արա Շիրազը
  - 4) Գևորգ Գևորգյանը
- 10 Ո՞ր գավառում քրիստոնեություն քարոզելիս Մաշտոցը մտադրվեց գտնելու կամ ստեղծելու հայերենի նշանագրերը.
- 1) Նախիջևան
  - 2) Խաչեն
  - 3) Գողթն
  - 4) Տարոն
- 11 ԹՎարկվածներից ո՞վ հայագետ չէ.
- 1) Գ. Ղափանցյանը
  - 2) Լ. Օրբելին
  - 3) Հ. Աճառյանը
  - 4) Մ. Աբեղյանը
- 12 Որքա՞ն էր Վանի թագավորության զինված ուժերի ընդհանուր թիվն ըստ «Մարդության տարեգրության».
- 1) 150 հազար
  - 2) 300 հազար
  - 3) 250 հազար
  - 4) 350 հազար

13 Ո՞ր քաղաքը Կիլիկիայում դարձավ քեմալականների հարձակման առաջին թիրախը.

- 1) Ադանա
- 2) Տարսոն
- 3) Մարաշ
- 4) Սիս

14 Ինչպե՞ս է կոչվում Պատմահոր «Պատմութիւն Հայոց» աշխատության առաջին գիրքը.

- 1) «Հայոց մեծերի ծննդաբանությունը»
- 2) «Հայոց նախնիների նախապատմությունը»
- 3) «Հայոց մեծերի ծագումնաբանությունը»
- 4) «Բան միջակ պատմութեան մերոցն նախնեաց»

15 Որքա՞ն էր Միհրդատ VI-ին՝ Տիգրան Մեծի տրամադրած հայկական զորքի թիվը, որը պետք է Պոնտոսում մարտնչեր հռոմեացիների դեմ.

- 1) 16 հազար
- 2) 10 հազար
- 3) 13 հազար
- 4) 6 հազար

16 Ո՞վ է XIX դարի առաջին ռուս-պարսկական պատերազմի ժամանակ պարզևատրվել Գեորգիևյան IV աստիճանի խաչով.

- 1) Գրիգոր Մանուչարյանը
- 2) Հակոբ Հարությունյանը
- 3) Մարտիրոս Վեքիլյանը
- 4) Ռոստոմ բեկը

17 Ո՞ր փաստաթղթից են մեջբերված հետևյալ խոսքերը.

*«Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»:*

- 1) Հայոց ազգային խորհրդի՝ Հայաստանի անկախության մասին կոչից
- 2) «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ»-ից
- 3) «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթից
- 4) «Թուրքահայաստանի մասին» հրովարտակից

18

**Որտեղի՞ հայ կամավորների մասին է մեջբերված խոսքը.**

*«Հայերը կոչում և մեռնում էին իբրև հերոսներ, նրանց ղեկավարները, որ միշտ առջևի գծում էին, գրեթե բոլորն էլ վիրավոր էին»:*

- 1) Վանի
- 2) Սարիղամիշի
- 3) Բայազետի
- 4) Շուշիի

19

**Ո՞րն է «ՕՄՕՆ» հասկացության բացատրությունը.**

- 1) զինված մասնավոր զորահայիններ
- 2) բանակի հատուկ նշանակության ջոկատներ
- 3) բանակի մասնագիտացված ջոկատայիններ
- 4) միլիցիայի հատուկ նշանակության ջոկատներ

20

**Ըստ Ժամանակավոր կառավարության որոշման՝ ի՞նչ անունով է հայտնի Օսմանյան կայսրությունից նվաճված հայկական մասը՝ որպես վարչական առանձին միավոր.**

- 1) Հայկական օջախ
- 2) Թուրքահայաստան
- 3) Տաճկահայաստան
- 4) Հայկական նահանգ

21

**Գտնել ճիշտ պատասխանները.**

*Ի նշանավորումն հայ-հռոմեական դաշինքի վերականգնման՝ կայսր Մակրինոսը՝*

- ա. Տրդատին է վերադարձրել Կապադովկիայի կալվածքները, որոնք ստացել էր դեռևս Խոսրով I-ը:
- բ. խոշոր գումար է վճարել Տրդատին, որպեսզի հայոց այրուձին իրականացնի Կովկասի և հարակից տարածքների պաշտպանությունը:
- գ. Տրդատին է վերադարձրել Հայաստանից գերեվարված նրա կնոջը՝ թագուհուն:
- դ. Հայաստանից դուրս է բերել հռոմեական լեգեոնները, իսկ նրանց պարտականությունները ստանձնել է հայոց այրուձին:
- ե. Տրդատին է վերադարձրել Հայաստանից թալանված ավարը:

- 1) ա, գ
- 2) բ, ե
- 3) ա, ե
- 4) գ, դ

22

Արևմտյան Հայաստանում նախարարական հողային տիրույթները մասնատելու և դրանով երկիրը թուլացնելու նպատակով ի՞նչ ձեռնարկեց Հուստինիանոս I-ը.

- 1) Հողեր ժառանգելու իրավունք շնորհեց իշխանական տների ավագ ներկայացուցիչներին:
- 2) Տոհմական կալվածքներ ժառանգելու իրավունք շնորհեց նաև կանանց ու աղջիկներին:
- 3) Հողեր ժառանգելու և գնելու իրավունք շնորհեց բարձրաստիճան հոգևորականներին:
- 4) Անժառանգ մահացած իշխանական տների ներկայացուցիչների թողած հողային տիրույթների ժառանգորդ հռչակեց Բյուզանդական կայսրությանը:

23

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Արշամաշատ քաղաքի կառուցումը
- բ. Մելիկյան պետության առաջացումը
- գ. Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանության վերացումը Մեծ Հայքում
- դ. Հելլենիզմի դարաշրջանի սկիզբն Առաջավոր Ասիայում
- ե. Մագնեսիայի ճակատամարտը
- զ. Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը

- 1) բ, դ, գ, ա, ե, գ
- 2) դ, բ, ա, գ, գ, ե
- 3) բ, դ, գ, գ, ա, ե
- 4) դ, բ, գ, ա, գ, ե

24

Կաթողիկոսների անունները դասավորել ըստ հայրապետական տարիների ժամանակագրական հաջորդականության.

- ա. Ներսես Ա Պարթև
- բ. Հովհաննես Բ Գաբեղենացի
- գ. Հովսեփ Վայոցձորցի
- դ. Կոմիտաս Մամիկոնյան
- ե. Հուսիկ
- զ. Սահակ Ձորոփորցի

- 1) ե, ա, բ, գ, գ, դ
- 2) ե, ա, գ, բ, դ, գ
- 3) ե, ա, դ, գ, բ, գ
- 4) ա, ե, գ, գ, բ, դ

25

**Քաղաքների անունները համապատասխանեցնել դրանց վերաբերող բնութագրումներին.**

1. «այն լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով»

2. «Հայկական Կարթագեն»

3. «գեղեցիկ և շքեղ հորինվածքով»

4. «Նոր քաղաք»

ա. Երվանդակերտ

բ. Վաղարշապատ

գ. Բագարան

դ. Արտաշատ

ե. Տիգրանակերտ

1) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա

2) 1-ե, 2-դ, 3-գ, 4-բ

3) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ

4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ

26

**Գահակալման տարիները համապատասխանեցնել արքայի անվանը.**

1. Վռամշապուհ

2. Վարազդատ

3. Արտաշես Արշակունի

4. Շապուհ

5. Արշակ III

ա. 422–428 թթ.

բ. 415–419 թթ.

գ. 388–414 թթ.

դ. 378–387 թթ.

ե. 385–387 թթ.

զ. 374–378 թթ.

1) 1-զ, 2-գ, 3-բ, 4-դ, 5-ե

2) 1-ե, 2-դ, 3-ա, 4-գ, 5-զ

3) 1-զ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-դ

4) 1-զ, 2-գ, 3-ա, 4-բ, 5-դ

27

**Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- ա. Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները՝ առանց սեռի, ազգության և կրոնական խտրականության, ընդհանուր, գաղտնի, հավասար և բազմաստիճան քվեարկությամբ:
- բ. Բաթումի պայմանագրով Թուրքիային անցան Սուրմալուն, Կարսը, Ախալցխան, Նախիջևանը, Ջանգեզուրը:
- գ. 1920 թ. կեսերին ՀՀ տարածքը կազմում էր շուրջ 70 հազար քառ. կմ:
- դ. Հայաստանի առաջին հանրապետության ընտրովի խորհրդարանն ուներ 80 անդամ:
- ե. Խորհրդային իշխանությունը Հայաստանում քաղաքական բնույթի հետապնդումներ և բռնություններ չգործադրեց միայն հայկական բանակի սպայակազմի նկատմամբ:
- զ. Թիֆլիսում համապատասխան հանձնաժողովում Ա. Բեկզադյանն առաջարկում էր Խորհրդային Հայաստանին միացնել Լոռին, Լեռնային Ղարաբաղը և Ախալքալաքի գավառը:

- 1) բ, գ, ե
- 2) գ, դ, զ
- 3) ա, դ, գ
- 4) գ, ե, զ

28

**Ե՞րբ է իրականացվել Օսմանյան կայսրության նախկին վարչապետ Սայիդ Հալիմի սպանությունը.**

- 1) 1921 թ. դեկտեմբերի 6-ին
- 2) 1922 թ. ապրիլի 17-ին
- 3) 1921 թ. հուլիսի 5-ին
- 4) 1922 թ. հուլիսի 25-ին

29

**Ե՞րբ է Աշոտ Բագրատունու մոտ պատվիրակ ուղարկել Վասիլ I կայսրը և թագ խնդրել.**

- 1) 869 թ.
- 2) 867 թ.
- 3) 876 թ.
- 4) 885 թ.

30

**Արտաշես II-ը ո՞ր թագավորությունն է միացրել Հայոց թագավորությանը.**

- 1) Կոմագենեն
- 2) Ատրպատականը
- 3) Կապադովկիան
- 4) Ծոփքը



31

**Ի՞նչ առաջարկությամբ էին հանդես գալիս Պ. Մդիվանին և նրա կողմնակիցները Անդրկովկասի հանրապետությունների դաշնության ստեղծման ժամանակ.**

- 1) հանրապետություններին միայն մշակութային ինքնավարություն տալու
- 2) հանրապետությունների միջև միայն ռազմական դաշինք հաստատելու
- 3) հանրապետությունների ինքնիշխանությունը վերացնելու առաջարկությամբ
- 4) հանրապետությունների միջև երկկողմանի պայմանագրային հարաբերություններ հաստատելու և նրանց իրական անկախությունը պահպանելու

32

**Ո՞վ է ասել հետևյալ խոսքերը.**

*«Քեզ պսակում եմ, Մերուժան, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»:*

- 1) Սմբատ Բագրատունին
- 2) Բագարատ Բագրատունին
- 3) Աշոտ Բագրատունին
- 4) Սահակ Բագրատունին

33

**Ո՞վ է Հայաստանում տիրող իրավիճակն այսպես պատկերավոր բնորոշել.**

*«Հայերը մնացին առանց թագավորի, անտերունյ»:*

- 1) Պլուտարքոսը
- 2) Ապպիանոսը
- 3) Արիանոսը
- 4) Տակիտոսը

34

**Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Դեռ Գավգամելայի ճակատամարտից առաջ Հայաստանում գոյություն ունեցող վարչական երկու մեծ միավորներն էին Մեծ Հայքը և Փոքր Հայքը:

բ. Հայկազուն–Երվանդունիների գահակալության սկզբնական ժամանակաշրջանում երկրի արքան հայտնի էր «Արքայից արքա» տիտղոսով:

գ. Մակեդոնացու արշավանքներից հետո Արևելքում սկսված ժամանակաշրջանը հայտնի է «հելլենիստական» անունով:

դ. Ք. ա. III–I դարերում Հայաստանի թագավորը կրում էր «Տիեզերակալ արքա» տիտղոսը:

ե. Հին Հայաստանում քրմապետը նաև երկրի Մեծ դատավորն էր:

- 1) բ, դ
- 2) բ, գ, ե
- 3) գ, ե
- 4) ա, գ, դ

35

**Թվարկվածներից որո՞նք են Ռուսաստանում տեղի ունեցած Փետրվարյան հեղափոխության անմիջական հետևանքներ.**

- ա. միապետությունից անցում կատարվեց ժողովրդավարության
- բ. տապալվեց Ժողկոմխորհի իշխանությունը
- գ. իշխանությունը հանձնվեց բոլշևիկներին
- դ. երկրում ձևավորվեց Ժամանակավոր կառավարություն
- ե. իշխանությունը հանձնվեց Համառուսաստանյան սահմանադիր ժողովին

- 1) բ, գ
- 2) բ, ե
- 3) ա, դ
- 4) ա, գ

36

**XIX դ. երկրորդ կեսի հայ քաղաքական կյանքի հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծումը
- բ. «Բարենպատակ ընկերություն» խմբակի ստեղծումը
- գ. Արևմտահայերի «Ազգային սահմանադրության» հաստատումը
- դ. Հնչակյան կուսակցության ստեղծումը
- ե. Արմենական կուսակցության ստեղծումը

- 1) գ, բ, ա, ե, դ
- 2) գ, բ, ե, ա, դ
- 3) գ, ա, դ, բ, ե
- 4) բ, գ, ա, դ, ե

37

**Ստորև բերված պատմական իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

- ա. Հրանտ Դինքի սպանությունը
- բ. Լաչինի ազատագրումը
- գ. «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունների ստորագրումը Ցյուրիխում
- դ. Արթուր Մկրտչյանի ընտրվելը ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ
- ե. հայ ազատամարտիկների կողմից Կրկժանի ազատագրումը
- զ. եռաստիճան դատական համակարգի ներդրումը ՀՀ-ում

- 1) դ
- 2) բ
- 3) գ
- 4) ե

## Մականուն

- |                 |           |
|-----------------|-----------|
| 1. Մեծն Մուրադ  | 4. Արաբո  |
| 2. Հրայր Դժոխք  | 5. Վարդան |
| 3. Գարուն Աղասի |           |

## Անուն-ազգանուն

- |                        |                          |
|------------------------|--------------------------|
| ա. Սերոբ Վարդանյան     | դ. Կարապետ Թուր-Սարգսյան |
| բ. Համբարձում Պոյաջյան | ե. Արմենակ Ղազարյան      |
| գ. Սարգիս Մեհրաբյան    | զ. Առաքել Մխիթարյան      |

- 1) 1-գ, 2-դ, 3-զ, 4-ե, 5-ա
- 2) 1-բ, 2-ե, 3-զ, 4-դ, 5-ա
- 3) 1-բ, 2-ե, 3-դ, 4-զ, 5-գ
- 4) 1-բ, 2-զ, 3-դ, 4-ե, 5-գ

## Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.

- 1) Քաղաքներում առևտրին, արհեստներին, շուկաներին ու հարկահանությանը հետևող պաշտոնյան կոչվում էր մուխթասիբ:
- 2) Սեփական կալվածքները կամովին եկեղեցուն հանձնած և հոգևոր կոչում ընդունած հայ կալվածատերերին անվանել են պարոնտեր:
- 3) Պատերազմների ժամանակ գյուղացիներից, քաղաքացիներից և ազնվականներից հավաքագրվող զինուժը կոչվում էր աշխարհագոր:
- 4) Կիլիկյան Հայաստանի արքունի քարտուղարության գործակալության գլխավոր պաշտոնյան կոչվում էր կանցլեր:
- 5) Հայաստանի հարավում` Խլաթ կենտրոնով ստեղծված մահմեդական իշխանությունը կոչվում էր Շահ-Արմենների ամիրայություն:
- 6) Արևմտյան Հայաստանում ստեղծված կիսանկախ իշխանությունները կոչվում էին մելիքություններ:

## Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառահետևանքային կապերը.

- 1) 1999 թ. մայիսի 30-ի խորհրդարանական ընտրությունների հետևանքը Հայաստանում իշխանափոխությունն էր:
- 2) Գիտության և արվեստի ինստիտուտի` հասարակական գիտությունների հիմնահարցերով զբաղվելու պատճառը այդ ոլորտում անվանի գիտնականների ու հայագիտության ավանդույթների առկայությունն էր:
- 3) Հայ-թուրքական հարաբերությունների ձախողման պատճառը Հայաստանի կողմից Թուրքիայի Հանրապետությանը ներկայացված նախապայմաններն էին:
- 4) Արդյունաբերացումը Խորհրդային Հայաստանում առաջացրել է բնապահպանական խնդիրներ:
- 5) 1994 թ. մայիսին հրադադարի հաստատումը զուտ հայկական իշխանությունների նախաձեռնության արդյունք էր:

41

**Ընտրել ճիշտ պնդումները.**

- 1) Մինչև Ք. ա. III դարի վերջը Հայաստանին տիրելու Սելևկյան տերության փորձերն ապարդյուն են անցել, քանի որ Մեծ և Փոքր Հայքերը գործում էին միասնաբար:
- 2) Հայաստանի սատրապ Երվանդ III-ը ամուսնացած էր Աքեմենյան տիրակալ Արտաքսերքսես II-ի դստեր հետ:
- 3) Կամբիզի մահվանից հետո Աքեմենյան տերության մեջ սկսվեցին գահակալական կռիվներ, որոնք ավարտվեցին Դարեհ I-ի հաղթանակով:
- 4) Մենոն գորավարին հաջողվեց գրավել Բարձր Հայքի ոսկու հանքերը, որից հետո Ալեքսանդրն այլևս նոր գործ չուղարկեց Հայաստան:
- 5) Հունական աղբյուրները Երվանդ IV-ի մասին գրում են, որ նա այնքան հզոր էր, որ կարողացել էր ապաստան տալ սելևկյան տիրակալի դեմ ապստամբած նրա եղբորը:

42

**Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

- 1) Աղաբաբյան դպրոցի հիմնադրումը
- 2) Լազարյան ճեմարանի բացումը
- 3) Շուշիի թեմական դպրոցի բացումը
- 4) Ներսիսյան դպրոցի հիմնադրումը
- 5) Երևանի թեմական դպրոցի բացումը

43

**Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- 1) Չմանկատուկի ճակատամարտը
- 2) Ստեփանոս Հռոմկլայեցու բազմելը հայոց կաթողիկոսական աթոռին
- 3) Հայ-մոնղոլական դաշինքի հաստատումը
- 4) Մառիի ճակատամարտը
- 5) Կիլիկիայի հայոց թագավոր Օշինի գահակալման սկիզբը

--	--	--	--	--

**Կատարել համապատասխանեցում.**

Ա. Ֆրանց Լևինսոն–Լեսինգ  
 Բ. Վարդան Աճեմյան  
 Գ. Վիկտոր Համբարձումյան  
 Դ. Լևոն Քալանթարյան  
 Ե. Հովսեփ Օրբելի

Ա	Բ	Գ	Դ	Ե

- 1) ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի առաջին նախագահը
- 2) Հայաստանի գրողների միության առաջին նախագահը
- 3) 1947 թ. ընտրված՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահը
- 4) Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնի առաջին գլխավոր ռեժիսորը
- 5) ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի՝ Արմֆանի առաջին նախագահը
- 6) Լենինականի (Գյումրու) պետական թատրոնի առաջին ռեժիսորը

**Բրեստ–Լիտովսկի հաշտության պայմանագրին և ռուս–թուրքական լրացուցիչ պայմանագրին վերաբերող ստորև տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Միայն է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:**

- 45.1. Կովկասում Ռուսաստանը պահելու էր ընդամենը մեկ դիվիզիա, իսկ Թուրքիան իր բանակը պահելու էր պատերազմական վիճակում:
- 45.2. Արևմտյան Հայաստանում անհապաղ իրականացվելու էին Ռուսաստանի երաշխավորությամբ բարենորոգումներ:
- 45.3. Անտանտի նախկին անդամ Ռուսաստանը, անջատ հաշտություն կնքելով Քառյակ միության հետ, աշխարհամարտը շարունակելու էր այդ միության կողմից:
- 45.4. Ռուսաստանը պարտավորվում էր իր զորքերը շուտափույթ դուրս բերել Արևմտյան Հայաստանից:
- 45.5. Նախկին ռուս–թուրքական պետական սահմանից որոշակի հեռավորության վրա գտնվող տարածքից Ռուսաստանը պետք է հեռացներ իր բոլոր զորքերը և զորացրեր Առանձին հայկական կորպուսը:
- 45.6. Ռուսաստանը պարտավորվում էր իր զորքերը դուրս բերել նաև Կարսի մարզից:

46

Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.

1. Հայոց ազգային բյուրո
2. Ազգային պատվիրակություն
3. Ազգային սահմանադրություն
4. Ազգային ժողով
5. Հայոց տուն

- ա. Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ 1912 թ. ստեղծված մարմին  
բ. օրենսդիր մարմին, որն, ըստ Ազգային սահմանադրության, ընտրվում էր ամբողջ ազգի կողմից  
գ. Թիֆլիսում ստեղծված մարմին, որի գլխավոր նպատակը Հայկական հարցի լուծմանը նպաստելն էր  
դ. արևմտահայերի ներքին կյանքը կազմակերպող իրավական փաստաթուղթ  
ե. ըստ «Որոգայթ փառացի» հայոց ապագա պետության բարձրագույն օրենսդիր մարմին  
զ. դաշնակցության ղեկավար մարմին

- 1) 1-գ, 2-ա, 3-գ, 4-դ, 5-ե
- 2) 1-գ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-բ
- 3) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ, 5-գ
- 4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ, 5-ե

47

Թվարկված գործառույթներից առանձնացնել երեքը, որոնք Արշակունյաց Հայաստանում տնօրինում էր հազարապետը.

- ա. արքունի կալվածքների հսկողություն  
բ. պետական պարհակների տնօրինում  
գ. պալատական արարողությունների կազմակերպում  
դ. քաղաքների ամրությունների կառուցում, անտառատնկումների իրականացում  
ե. արքունի գանձարանի հսկողություն  
զ. ճանապարհների և կամուրջների կառուցում, ջրանցքների անցկացում  
է. Արշակունյաց սեպուհների դաստիարակություն

- 1) բ, է, գ
- 2) բ, դ, գ
- 3) գ, է, է
- 4) ա, դ, գ

**Թվարկվածներից որո՞նք են 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի հետևանքներ.**

- ա. Հայաստանը վճռական պահին օգնության հասավ Ռուսաստանին, որը շարունակում էր կռվել թուրքերի դեմ:
- բ. Դրական դեր խաղաց թուրքերի դեմ պայքարում Անդրկովկասի ժողովուրդների փոխհամաձայնեցված ու համատեղ պայքարը շարունակելու համար:
- գ. Դրվեց ամբողջական հայրենիքի վերականգնման ճանապարհի սկիզբը:
- դ. Բնաջնջումից փրկվեցին Անդրկովկասի ժողովուրդները:
- ե. Թուրքական կողմը ստիպված եղավ մեղմացնել պահանջները և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հետ կնքել Բաթումի հաշտության պայմանագիրը:
- զ. Հայությունը հնարավորություն ստացավ պարտված թշնամուն թելադրելու հաշտության սեփական պայմանները:
- է. Հայկական պետությունը դարձավ աշխարհամարտի մասնակից կողմ և այս հիմքի վրա իրավական (դե յուրե) ճանաչում ստացավ Անտանտի երկրների կողմից:

- 1) գ, ե, է
- 2) բ, դ, զ
- 3) ա, դ, է
- 4) դ, ե, զ

**Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառներ չեն.**

- ա. 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Կարսի անկման պատճառը հայ զինվորների ու հրամանատարության բարոյահոգեբանական ու մարտական պատրաստվածության թուլությունն էր:
- բ. Բաթումի թուրք-անդրկովկասյան բանակցություններին գերմանական պատվիրակության մասնակցության պատճառը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չեղյալ հայտարարելն էր:
- գ. 1928–1940 թթ. բանվոր դասակարգի և ինժեներական անձնակազմի քանակական աճը բացատրվում էր պարենմասնատրման քաղաքականության կիրառմամբ:
- դ. Թուրքիային Սուրմալու գավառն անցնելու պատճառը Տրապիզոնի հաշտության պայմանագրի կնքումն էր:
- ե. Արցախյան զոյամարտում Խոջալուի ազատագրման ժամանակ գլխավոր ճանապարհի կողմից միջանցք թողնելը բացատրվում էր հայ մարտիկների ցուցաբերած մարդասիրությամբ:
- զ. 1920 թ. աշնանը Լոռիում վրացական զեներալ-նահանգապետության ստեղծման պատճառը նոյեմբերի 13-ին ստորագրված թուրք-վրացական համաձայնագիրն էր:
- է. Խորհրդային իշխանության տարիներին Հայ դատի ու պահանջատիրության հիմնախնդրով զբաղվում էր միայն Սփյուռքը, որովհետև Խորհրդային Հայաստանը զրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից:

- 1) բ, գ, ե, է
- 2) ա, դ, գ, է
- 3) բ, գ, դ, գ
- 4) ա, բ, դ, ե

**Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

- ա. Սասունի ինքնապաշտպանությունը՝ Անդրանիկի գլխավորությամբ
- բ. հայերի կոտորածն Ադանայում
- գ. հայ-թաթարական ընդհարումների ավարտը
- դ. Մշո Ս. Առաքելոց վանքի կռիվը
- ե. Սասունի հերոսամարտը՝ Մեծն Մուրադի ղեկավարությամբ
- զ. Զեյթունի ապստամբությունը՝ Նազարեթ Չավուշի ղեկավարությամբ
- է. Խանասորի արշավանքը
- ը. Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական ժողովը Էջմիածնում
- թ. Վանի հերոսամարտը՝ Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ

- 1) դ
- 2) ը
- 3) ա
- 4) գ



51

**Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

- ա. Սկյութների ռազմական գործողությունների սկիզբը Ուրարտուի դեմ
- բ. Վանի տերության՝ Եփրատի հովտով դեպի Բաբելոն շարժվող զորքերի կասեցումը Թիգլաթպալասար III-ի կողմից
- գ. Էրեբունի ամրոցի հիմնադրումը
- դ. Վանի թագավորության տեղական սեպագրի ստեղծումը
- ե. Արգիշտի I-ի արշավանքը դեպի Դիաուխի
- զ. Սարդուրի III-ի հիշատակումն ասորեստանյան արձանագրություններում
- է. Մենուախինիլի քաղաքի հիմնադրումը
- ը. Տուշպա մայրաքաղաքի հիմնադրումը
- թ. Վանի թագավորության միասնական դիցարանի ստեղծումը

- 1) է
- 2) բ
- 3) գ
- 4) է

52

**Վարդանանց պատերազմի շրջանի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

- ա. ապստամբ ուժերի կողմից Արտաշատ, Գառնի, Արտազերս ամրոցների ազատագրումը պարսից կայսերներից
- բ. Վարդան Մամիկոնյանի և հոների միջև Սասանյանների դեմ ուղղված դաշինքի կնքումը
- գ. Ավարայրի ճակատամարտը
- դ. Աղվանքի հազարապետի և Եպիսկոպոսների ժամանումը Հայաստան
- ե. պարսից զորքի՝ Հայաստանից հանելը Հազկերտի կողմից
- զ. ապստամբական կառավարության կազմումը
- է. «Հավատո ուխտի» ընդունումը
- ը. Աղվանքից Վարդան Մամիկոնյանի շուտափույթ վերադարձը Հայաստան
- թ. Վասակ Սյունու դատապարտվելը մահվան
- ժ. Խաղիաղի ճակատամարտը

- 1) է, ա, դ, գ, բ, ժ, ը, գ, է, թ
- 2) ա, է, դ, գ, բ, ը, ժ, է, գ, թ
- 3) է, ա, գ, դ, ժ, բ, ը, գ, է, թ
- 4) է, ա, գ, դ, բ, ժ, ը, գ, թ, է

## Անուն

## Պաշտոն

- |                      |                                   |
|----------------------|-----------------------------------|
| 1. Մ. Սիլիկյան       | ա. «Ղարաբաղ կոմիտեի» անդամ        |
| 2. Հ. Պողոսյան       | բ. Հայհեղկոմի նախագահ             |
| 3. Ս. Շահումյան      | գ. ՀՀ ֆինանսների նախարար          |
| 4. Խ. Կարճիկյան      | դ. ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար |
| 5. Ս. Կասյան         | ե. հայկական դիվիզիայի հրամանատար  |
| 6. Ս. Տեր-Գաբրիելյան | զ. Բաքվի կոմունայի ղեկավար        |
| 7. Ի. Մուրադյան      | է. Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ  |
|                      | ը. ՀՄԽՀ արտաքին գործերի ժողկոմ    |

- 1) 1-ե, 2-դ, 3-գ, 4-զ, 5-բ, 6-է, 7-ա
- 2) 1-ե, 2-դ, 3-բ, 4-զ, 5-ը, 6-զ, 7-ա
- 3) 1-բ, 2-ա, 3-ը, 4-դ, 5-զ, 6-զ, 7-է
- 4) 1-բ, 2-զ, 3-զ, 4-դ, 5-ը, 6-ա, 7-է

Արևելքի ժողովուրդների առաջին համագումարին վերաբերող պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը տեղի ունեցավ Անկարայում և նպաստեց ռուս-թուրքական բարեկամության ամրապնդմանը:
- բ. Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի ստեղծած «Քարոզչության և գործողության խորհուրդը» 1920 թ. սեպտեմբերի 18-ին ընդունեց մի Բանաձև-փաստաթուղթ, որի հիմնական դրույթներն ամբողջությամբ ուղղված էին ՀՀ-ի և հայ ժողովրդի դեմ:
- գ. Համագումարը կարևոր դեր խաղաց Արևելք-Արևմուտք համագործակցությունն ամրապնդելու գործում:
- դ. Այդ խորհրդի մշակած փաստաթղթի համաձայն՝ Ռուսաստանը՝ որպես փրկարար և հաշտարար, պետք է մտներ Հայաստան և այնտեղ հաստատեր խորհրդային վարչակարգ:
- ե. Այդ Բանաձևով առաջարկվում էր հնարավոր բոլոր միջոցներով օգնել քեմալականներին և Հայաստանի վրա նրանց ռազմարշավի միջոցով նպաստել վերջինիս խորհրդայնացմանը:
- զ. Դավադիր այս փաստաթղթի ընդունումից երկու ամիս անց Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու ռազմական գործողություններ սկսեց Հայաստանի դեմ:
- է. Համագումարը որոշեց ռազմական և նյութական օգնություն տրամադրել Հայաստանի Հանրապետությանը:
- 1) բ, գ, զ
  - 2) բ, դ, ե
  - 3) ա, գ, է
  - 4) գ, դ, զ

**Թվարկված պնդումներից որո՞նք են բնութագրում Բագրատունյաց Հայաստանի պետական կառավարման համակարգը.**

- ա. Բագրատունի թագավորը կարող էր խորհրդակցել հայր մարդպետի, իշխանաց իշխանի, մաղխազի և սպարապետի հետ:
- բ. Բագրատունի թագավորները ինքնակալ միապետներ չէին. նրանց իրավունքները սահմանափակված էին աշխարհաժողովի կողմից:
- գ. Բագրատունիների օրոք Հայաստանը տարբեր թագավորություններից և իշխանություններից կազմված յուրահատուկ համադաշնություն էր:
- դ. Հայոց կաթողիկոսը ճանաչում էր Բագրատունի թագավորի գերիշխանությունը:
- ե. Բագրատունի թագավորների գահը ժառանգում էր ավագ որդին. թագավորի եղբայրները գահը զբաղեցնելու իրավունք չունեին:
- զ. Իշխանաց իշխանին ենթարկվում էին արքայական կալվածքները տնօրինողները, պետական գանձարանը, երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները:
- է. Պատերազմների ժամանակ մանր թագավորությունների գործերը ինքնուրույն էին գործում. նրանք չէին ենթարկվում հայոց սպարապետին:

- 1) ա, գ, զ
- 2) գ, դ, զ
- 3) ա, բ, դ
- 4) բ, ե, է

**Ընտրել սխալ պնդումները.**

- ա. Ըստ ավանդության՝ Բելի նկատմամբ Հայկի տարած հաղթանակի տարին (Ք. ա. 2492 թ.) համարվել է Բուն Հայոց թվականի սկիզբը:
- բ. Հայաստանի չափազանց բարենպաստ պայմաններն ու աշխարհաքաղաքական դիրքը անցյալում և նորագույն շրջանում առաջացրել են տարբեր պետությունների, ժողովուրդների և քոչվոր ցեղերի հետաքրքրությունը:
- գ. Հայասան առաջին անգամ հիշատակվում է Ք. ա. XVI դ. իտեթական մի արքայի արշավանքների կապակցությամբ:
- դ. Խեթական աղբյուրների համաձայն՝ Հայասա թագավորությունն ունեցել է արքունիք, բանակ, արքունի դիվան՝ իր դպիրներով, ինչպես նաև դիցարան:
- ե. «Նաիրի» անվամբ իրենց երկիրը կոչել են նաև Վանի թագավորության տիրակալներն ասուրերենով գրված արձանագրություններում:
- զ. Հայերի օգտագործած արեգակնային օրացույցի հիմքով տոմարական համակարգերից առավել նշանավոր են Հայոց մեծ թվականը, Հայոց միջին թվականը և Հայոց փոքր թվականը:
- է. Ըստ Մովսես Խորենացու՝ Տիգրան Մեծը, ի թիվս բազում այլ բարեփոխումների, բարեկարգել ու ճշգրտել է օրացույցը:

- 1) ա, գ, զ
- 2) բ, դ, ե
- 3) գ, զ, է
- 4) բ, գ, է

**Կատարել համապատասխանեցում.**

- ա. Այուբյան սուլթանության սուլթան, որը գրավեց Երուսաղեմը  
 բ. Բյուզանդական կայսր, որը գերեվարեց Լևոն I-ին  
 գ. Կիլիկիայի իշխան, որը Վահկա բերդը դարձրեց իշխանության կենտրոն  
 դ. Սրբազան հռոմեական կայսրության կայսր, որը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում  
 ե. Անտիոքի իշխան, որն իր մոտ էր հրավիրում Լևոն II-ին՝ սահմանային վեճերը լուծելու պատրվակով  
 զ. Ռուբինյան իշխան, որ Անավարզան դարձրեց մայրաքաղաք  
 է. Բյուզանդիայի կայսր, որը թագ ուղարկեց Լևոն II-ին  
 ը. Լևոն II-ի ազգականը, որը գրկվեց թագաժառանգի իրավունքներից  
 թ. Չարելի խնամակալ հայոց կաթողիկոսը  
 ժ. մոնղոլական զորահրամանատար, որի մոտ մեկնեց Կոստանդին թագավորահայրը՝ դաշինքի առաջարկով

- |                        |                          |
|------------------------|--------------------------|
| 1. Կոստանդին Ռուբինյան | 7. Հովհաննես Կոմնենոս    |
| 2. Բաչու               | 8. Պողոս Սսեցի           |
| 3. Ֆրիդրիխ Շիկամորուս  | 9. Թորոս I               |
| 4. Հովհաննես Սսեցի     | 10. Ռայմոնդ-Ռուբեն       |
| 5. Սալահ ադ Դին        | 11. Ալեքսիոս III Անգելոս |
| 6. Բոհեմունդ III       |                          |

- 1) ա-5, բ-7, գ-1, դ-3, ե-6, զ-9, է-11, ը-10, թ-4, ժ-2
- 2) ա-5, բ-3, գ-9, դ-11, ե-7, զ-1, է-10, ը-4, թ-8, ժ-2
- 3) ա-5, բ-11, գ-1, դ-7, ե-10, զ-9, է-3, ը-6, թ-8, ժ-2
- 4) ա-2, բ-11, գ-9, դ-7, ե-10, զ-1, է-3, ը-6, թ-4, ժ-5

**Թվարկվածներից որո՞նք են խորհրդային ամբողջատիրական համակարգի բնորոշ գծերից.**

- 1) պետական իշխանության բռնազավթումը մեկ կուսակցության կողմից
- 2) քաղաքացիական ազատությունների վերացումը
- 3) գաղափարախոսական բազմակարծության աճը
- 4) եկեղեցու նկատմամբ հանդուրժողական քաղաքականությունը
- 5) երկկուսակցական համակարգի հաստատումը
- 6) իշխող կուսակցության ներսում ընդդիմության ոչնչացումը
- 7) իշխանության երեք ճյուղերի իրական տարանջատումը
- 8) միակուսակցական համակարգի հաստատումը

**Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

- 1) Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հնդեվրոպական երևույթ է և հայոց մեջ ունի վաղնջական ակունքներ:
- 2) Հունահռոմեական հեղինակները Արտաշես I-ի ստեղծած վարչամիավորներն անվանում էին ստրատեգիա:
- 3) Սարդուրի I-ը իր տերությանն է միացրել Դիաուխի երկիրը, որը հետագայի Տայք գավառն է:
- 4) Որոշ ուսումնասիրողների կարծիքով Նանեն եղել է նաև ռազմի դիցուհի:
- 5) Աստվածային գերագույն եռյակի պաշտամունքը բնիկ հելլենիստական երևույթ է և հայոց մեջ տարածում է ունեցել այդ շրջանից:
- 6) Անահիտը հայոց դիցարանում մեծարվել է «Ոսկեմայր» տիտղոսով:
- 7) Արամազդը երկրի և երկնքի արարիչ, պտղաբերություն ու արգասավորություն շնորհող աստվածն էր:
- 8) Զրադաշտականությունն իր բնույթով միաստվածային կրոն է:

**Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

- 1) VII դարի կեսերի արաբական արշավանքների հետևանքը Մասանյան տերության կործանումն էր:
- 2) IX դարի վերջին Սաջյան ամիրայի՝ Հայաստան ներխուժելու պատճառը հայ-բյուզանդական 883 թ. կնքված պայմանագիրն էր:
- 3) Մծբինի հաշտության հետևանքը Հյուսիսային Միջագետքում հռոմեացիների դիրքերի թուլացումն էր:
- 4) Նախարարների հետ Տիրանի ունեցած բարդ հարաբերությունների հետևանքով կորուստներ կրեցին Արծրունյաց և Ռշտունյաց նախարարական տոհմերը:
- 5) Դենշապուհի աշխարհագրի հետևանքը Հայաստանում հարկային բեռի թեթևացումն էր:
- 6) Գյուտ կաթողիկոսի՝ Տիգրան մեկնելու պատճառը Խոսրով II-ի գումարած ժողովին մասնակցելն էր:
- 7) Խաղամախյայի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քսանհազարանոց զորքի պարտությունն էր:
- 8) Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառը վաղ միջնադարին բնորոշ ավատատիրական մասնատվածությունը և հայ իշխանների կենտրոնաձիգ քաղաքականությունն էին:

**Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ.**

- 1) Ակցիումի ճակատամարտից հետո հայ-պոնտական ուժերը մտան Հայաստան և արդյունավետ պայքար մղեցին հռոմեացիների դեմ:
- 2) Պարսկաստանում Սասանյանների իշխանության գալը թուլացրեց Արշակունիների դիրքերը Հայաստանում:
- 3) Հայոց արքա Վաղարշ II-ի ճիշտ քաղաքական դիրքորոշման արդյունքում Հայաստանից հեռացվեցին հռոմեական լեզեոնները:
- 4) Հռանդեայի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց Հայաստանի նկատմամբ Ներոն կայսեր դիրքորոշման փոփոխմանը:
- 5) Օգոստոս կայսեր կողմից Տիգրան VI-ին գահ բարձրացնելը դժգոհություն առաջացրեց Հայաստանում:
- 6) Օգոստոս կայսեր հեռագնա ծրագիրը նպատակ ուներ միավորելու Հայաստանը Կապադովկիայի հետ և ստեղծելու միացյալ ուժեղ պետություն ընդդեմ Պարթևստանի:
- 7) Արածանիի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց հայկական դիրքերի ամրապնդմանը Կորդուքում ու Հյուսիսային Միջագետքում:

**Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Հայկական համաշխարհային կոնգրեսին մասնակցում էին 12 երկրների 751 պատգամավորներ:
- 2) 1945 թ. մայիսի 28-ին ՀՀ նախկին վարչապետ Հ. Օհանջանյանը դիմեց Ստալինին, Թրումանին և Չերչիլին՝ խնդրելով ջանքեր գործադրել Հայկական հարցի լուծման համար:
- 3) Հայրենական մեծ պատերազմի 64 հայ զեներալներից 6-ը հետագայում դարձել են մարշալներ:
- 4) Խորհրդա-ֆիննական պատերազմում հայերից 4 հոգի արժանացել են ԽՍՀՄ հերոսի կոչման:
- 5) Ստալինգրադի ճակատամարտում ցուցաբերած անձնվիրության համար ԽՍՀՄ կրկնակի հերոսի կոչմանն արժանացավ Նելսոն Ստեֆանյանը:
- 6) Հայ օգնության միությունը (ՀՕՄ) գործում է 1921 թվականից:
- 7) 1920-ական թվականներին խոշոր գաղթօջախ ձևավորվեց նաև Ամերիկայում (ԱՄՆ և Կանադա)՝ շուրջ 130 հազար հայերով:
- 8) 1921-1936 թթ. Խորհրդային Հայաստան է ներգաղթել ավելի քան 52 000 հայ:
- 9) 1921 թ. դեկտեմբերին Խորհրդային Հայաստան ներգաղթածների թիվը շուրջ 3000 էր:

**Գտնել ճիշտ պնդումները.**

- 1) Սսի անկումից հետո Կիլիկիայում իր գոյությունը շարունակում էր հայոց կաթողիկոսությունը:
- 2) Նեղվելով կարամանների ու մոնղոլների հարձակումներից, նաև ծանր հարկերից՝ Կիլիկիայի հայ բնակչության և իշխանների մի մասը թագավորության անկումից հետո ստիպված հեռացավ հայրենիքից:
- 3) Լևոն VI-ը Գվիդոն Լուսինյանի եղբորորդին էր, որը մեծ դժվարությամբ Կիպրոսից հասավ Սիս և օժվեց հայոց թագավոր:
- 4) Լևոն VI-ի ժամանակ Կիլիկյան հայկական թագավորությունը, բացի մայրաքաղաքից, ընդգրկում էր Անավարզա քաղաքը և մի քանի բերդեր Լեոնային Կիլիկիայում:
- 5) Ասորիները և կարամանները 1375 թ. կրկին պաշարեցին մայրաքաղաք Սիսը:
- 6) Ռազմամթերքի և սննդամթերքի պակասը ստիպեց հայերին 1376 թ. ապրիլի 16-ին հանձնել Սսի միջնաբերդը:
- 7) Սսի գերյալների թվում էին Լևոն VI Լուսինյանը և իր ընտանիքը, Մեսրոպ Արտազեցի կաթողիկոսը, որոնց հատուկ հսկողությամբ տարան Կահիրե:
- 8) Լևոն VI թագավորը մնաց Կահիրեում, իսկ հետագայում գերությունից ազատվեց և տեղափոխվեց Արևմտյան Եվրոպա:

**Արևմտահայության զանգվածային վերաբնակեցմանը վերաբերող ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Ռուսաստանին անցած Ախալքալաքի և Ալաշկերտի կիսավեր դարձած գավառների համար վերաբնակեցումը ունեցավ կարևոր նշանակություն. աճեց հայ բնակչության տեսակարար կշիռը:
- 2) Արևմտահայերի զանգվածային վերաբնակեցման հետևաքնները աղետալի էին. էրզրում և Կարս քաղաքները զրկվեցին մեծ թվով հայ առևտրականներից ու արհեստավորներից:
- 3) Ադրիանուպոլսի պայմանագրով թուրքերին վերադարձվող տարածքների հայությունը հայտնվեց մահմեդականների վրեժխնդրության վտանգի առջև:
- 4) 1829 թ. մայիսին սկսվեց զանգվածային վերաբնակեցումը:
- 5) Վերաբնակիչների թիվը մեծ էր՝ մոտ 45 000 մարդ:
- 6) Կարսեցիները հաստատվեցին Գյումրիում, Շիրակի դաշտում և Թալինի շրջակայքում:
- 7) Ախալցխայի գավառում էրզրումահայերը վերաշինում են շուրջ 50 գյուղ:
- 8) Բայազետցիներն ու ալաշկերտցիները հաստատվեցին Սևանա լճի ավազանում, մասամբ նաև Սուրմալուում, Դարաչիչակում, Ապարանում և Փամբակում:

65

Առաջին աշխարհամարտի տարիների իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Վանի հերոսամարտի ավարտը
- 2) Էրզրումի գրավումը ռուսական զորքի կողմից
- 3) Դիլմանի ճակատամարտը
- 4) «Արևելյան լեգեոնի» ստեղծումը
- 5) ԱՀԿ-ի ստեղծումը
- 6) Արևմտահայերի առաջին համագումարը
- 7) ԱԺԴՀ-ի ստեղծումը
- 8) Երզնկայում զինադադարի ստորագրումը
- 9) Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի կնքումը

66

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Փրասսպայի մոտ հռոմեական զորքի պարտությունը
- 2) հռոմեա-պոնտական պատերազմների ավարտը
- 3) Փոքր Հայքի ռազմակալումը Պոնտոսի կողմից
- 4) հայոց Արշակ I արքայի գահակալումը
- 5) Էրատոյի համատեղ գահակալումը եղբոր հետ
- 6) Տիգրան I-ի որդու պատանդ տրվելը պարթևներին
- 7) Միհրդատ Եվպատորի բանագնացների ժամանումը Արտաշատ

--	--	--	--	--	--	--	--

67

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Մրենի եկեղեցու կառուցումը
- 2) Յարմուք գետի ափին տեղի ունեցած ճակատամարտը
- 3) Պարսկաստանի արևելյան շրջանների զորքերի հրամանատար Վահրամ Չուբինի գլխավորած ապստամբությունը
- 4) Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև «հավիտենական» կոչված հաշտության կնքումը
- 5) Զվարթնոցի տաճարի կառուցման ավարտը
- 6) Խաչափայտի ազատագրումը և վերադարձը Երուսաղեմ
- 7) պարսիկ Սուրենին Հայաստանում մարզպան նշանակելը

--	--	--	--	--	--	--	--



**Կատարել համապատասխանեցում.**

- Ա. Ամարասում հայոց դպրոցի հիմնադիրը  
 Բ. Սսում ստեղծագործած նշանավոր մանրանկարիչը  
 Գ. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու ճարտարապետը  
 Դ. Նորավանքի նշանավոր խաչքարագործ վարպետը  
 Ե. Հռոմկլայում ստեղծագործած նշանավոր մանրանկարիչը  
 Զ. Սկևռայում ստեղծագործած նշանավոր մանրանկարիչը  
 Է. Գոշավանքի նշանավոր խաչքարագործ վարպետը

- 1) Մեսրոպ Մաշտոց
- 2) Մոմիկ
- 3) Սարգիս Պիծակ
- 4) Մանուել
- 5) Գրիգոր Մլիճեցի
- 6) Սահակ Պարթև
- 7) Պողոս
- 8) Թորոս Ռոսլին

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

**Կատարել համապատասխանեցում.**

- Ա. Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը ԼՂՀ-ում  
 Բ. ՀՀ լիիրավ անդամակցելը Եվրոպայի խորհրդին  
 Գ. ՀՀ Սահմանադրության երկրորդ փոփոխությունների հաստատումը  
 Դ. Շուշիի ազատագրումը  
 Ե. «Հոչակագիր Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հոչակման մասին» որոշման ընդունումը  
 Զ. Մարտակերտ քաղաքի ազատագրումը  
 Է. զինված ահաբեկչությունը ՀՀ Ազգային ժողովում

- 1) 1992 թ. մայիսի 8-9
- 2) 2001 թ. հունվարի 25
- 3) 1991 թ. սեպտեմբերի 2
- 4) 2015 թ. դեկտեմբերի 6
- 5) 1999 թ. հոկտեմբերի 27
- 6) 1992 թ. օգոստոսի 15
- 7) 1993 թ. հունիսի 28
- 8) 2016 թ. դեկտեմբերի 6

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Միսալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:

- 70.1. Առաջինը ստեղծվել է Արևելահայերի ազգային խորհուրդը, հետո՝ Արևմտահայերի ազգային խորհուրդը:
- 70.2. «Որոգայթ փառաց»-ը հայ առաջին հրապարակախոսական տպագիր աշխատությունն է, որը կոչ էր անում հայ երիտասարդությանը՝ ապստամբելու հանուն հայրենիքի ազատագրման:
- 70.3. Առաջին հայ պարբերականը «Ազդարարն» է, որ հրատարակվել է Կալկաթայում:
- 70.4. Հայ-թաթարական բախումներն առաջինը սկսվեցին Բաքվում՝ նահանգապետ Նակաշիձեի հրահրմամբ:
- 70.5. Հայ առաջին քաղաքական լրագիրը «Ազատության ավետաբերն» է, որը տպագրվել է «Հայրենասերների միություն» խմբակի կողմից:
- 70.6. Հայ առաջին երգահան Տիգրան Չուխաճյանը ստեղծել է ազգային առաջին օպերան՝ «Անուշը»: